ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ №84/3-Ա «07» 05 2025թ.

2025/2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարանի մագիստրատուրայի (առկա և հեռակա ուսուցման ձևերով) ընդունելության կարգի» 10-րդ կետը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. 2025/2026 ուսումնական տարվա առկա ուսուցման ձևով մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպել համաձայն հետևյալ ժամանակացույցի.

1) Առաջին փուլ.

ա. փաստաթղթերն ընդունել 2025թ. հունիսի 2-ից հունիսի 27-ը՝ մինչև ժամը 18:00,

բ. ընդունելության քննություններն անցկացնել 2025թ. հուլիսի 2-ին,

գ. անվճար և վճարովի ուսուցման տեղերի համար մրցույթի արդյունքներն ամփոփել 2025թ. հուլիսի 4-ին,

դ. վճարովի համակարգ ընդունված դիմորդների ուսման վճարի (2025/2026 ուսումնական տարվա յուրաքանչյուր կրթական ծրագրի համար նախատեսված 1-ին կիսամյակի ուսման վճարի առնվազն 25%-ը) վճարման վերջնաժամկետ սահմանել 2025թ. հուլիսի 18-ը:

2) Երկրորդ փուլ.

ա. փաստաթղթերն ընդունել 2025թ. հուլիսի 8-ից օգոստոսի 15-ը՝ մինչև ժամը 18:00,

բ. ընդունելության քննություններն անցկացնել 2025թ. օգոստոսի 22-ին,

գ. վճարովի համակարգ ընդունված դիմորդների ուսման վճարի (2025/2026 ուսումնական տարվա յուրաքանչյուր կրթական ծրագրի համար նախատեսված 1-ին կիսամյակի ուսվարձի առնվազն 25%-ը) վճարման վերջնաժամկետ սահմանել 2025թ. օգոստոսի 29-ը:

2. 2025/2026 ուսումնական տարվա **հեռակա** ուսուցման ձևով մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպել համաձայն հետևյալ ժամանակացույցի.

ա. փաստաթղթերն ընդունել 2025թ. սեպտեմբերի 2-ից հոկտեմբերի 6-ը՝ մինչև ժամը 18:00,

բ. ընդունելության քննություններն անցկացնել 2025թ. հոկտեմբերի 9-ին,

գ. վճարովի համակարգ ընդունված դիմորդների ուսման վճարի (2025/2026 ուսումնական տարվա յուրաքանչյուր կրթական ծրագրի համար նախատեսված 1-ին կիսամյակի ուսման վճարի առնվազն 25%-ը) վճարման վերջնաժամկետ սահմանել 2025թ. հոկտեմբերի 24-ը:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ ուսումնական ստորաբաժանումներին:

Ռեկտոր՝ Հ. Հովհաննիսյան